

Կայացավ քաղաքացիների սեպտեմբեր ամսվա ընդունելությունը

12.09.2017



2017 թվականի սեպտեմբերի 8-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի մոտ տեղի ունեցավ քաղաքացիների հերթական ընդունելությունը: Ընդունելության համար նախապես ցուցակագրվել էր 104 քաղաքացի, ընդունելության էին եկել 100-ը:

Ընդունելության եկած 97 քաղաքացիներ դիմել էին դրամական աջակցության խնդրանքով, որոնց խնդրանքը բավարարվել է:

Երկու քաղաքացիներ դիմել էին հողային վեճի և շենք-շինությունների հարցերով: Մեկ քաղաքացի դիմել է աշխատանքի տեղավորման խնդրանքով: Վերջիններիս հարցերն ուսումնասիրման ընթացքում են: